Հավելված
Ախուրյանի « Այգաբաց մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի 2026 թվականի մայիսի 25 -ի N20-Ն հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Այգաբաց մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մեթոդիստի, ֆիզկուլտուրայի հրահանգչի և հոգեբանի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

N	**Թափուր պաշտոնի անվանումը**	**Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները)**	**Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝**	**Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը**
1	2	3	4	5
1	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Այգաբաց մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 1.մեթոդիստ-0.25 դրույք /33.000 ՀՀ դրամ աշխատավարձ/, 2.Ֆիզկուլտուրայի հրահանգիչ-0.25 դրույք /33.000 ՀՀ դրամ աշխատավարձ/, 3.հոգեբան-0.5 դրույք	**1)Որակավորման պահանջները** 1. Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստը ուսումնական գծով տնօրենի տեղակալ պետք է ունենա՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ: 2.նախադպրոցական ուսումնական հաստատության Ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և վերջին տասը տարվա ընթացքում ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի առնվազն երեք տարվա ստաժ : 3.նախադպրոցական ուսումնական հաստատության, հոգեբանի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա՝ բարձրագույն մասնագիտական կրթություն: **2) Ընդհանրական պահանջները** Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի ֆիզ.հրահանգչի և հոգեբանի պաշտոնն զբաղեցնողը պետք է իմանա պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները. ա. դաստիարակչական հարցերը, ըստ ոլորտի՝ կրթության պետական	**Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը,** որը՝ 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ. 2)դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից. 3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված	1)դիմում Ձև1) 2)անձը հաստատող փաստաթուղթ. 3)կրթության մասին փաստաթուղթ 4)աշխատանքային ստաժի մասին տեղեկանք 5)ինքնակենսագրություն ձև4 6)մեկ լուսանկար՝ 3×4չափի. 7)այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ. 8)Հայաստանի Հանրապետության

	/ 66.000ՀՀ դրամ աշխատավարձ/,	չափորոշիչները, նորմատիվ փաստաթղթերը և մեթոդական հանձնարարականները, մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի և հիգիենայի, մինչ բժշկական օգնության հիմունքները, աշխատանքի անվտանգության, երեխաների կյանքի և առողջության պահպանման կանոնները:	այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը. 4)դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործությունն կատարելու համար:	արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական. 9)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(դրանց առկայության դեպքում):
		Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի, ֆիզկուլտուրայի հրահանգչի և հոգեբանի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պահանջները:		**Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:**

2	Սրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը	Դիմումների և փաստաթղթերի ընդունումը		Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները
	Վայրը՝ ՀՀ ՇՄ Ախուրյան համայնքի Այգաբաց բնակավայրի փողոց 9, 36շենք, Այգաբաց մանկապարտեզ: Օրը՝2026թվականի հուլիսի 1-ին ժամը՝11:00	Փաստաթղթերը ներկայացնելու,լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել՝ ՀՀՇՄ Ախուրյան համայնքի Այգաբաց բնակավայրի 9 փողոց, 36 շենք: Հեռ՝ 094078363 : Էլ. հասցե՝mankapartezaygabats@gmail.com Սրցույթը անց է կացվելու 2 փուլով՝ գրավոր և բանավոր: Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝ https://escs.am/am/news/11978:		2026թվականի մայիսի 26-ից հունիսի 24 -ը ներառյալ
		Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերից: Սրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել akhuryan.am կայքում:		